ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 387
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի *գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
07-001-0500-0116 կադաստրային ծածկագրով 22.2279 հա մակերեսով ջրային և գյուղատնտեսական նպատակային նշանակության (2.477460 հա մակերեսով վարելահողեր, 2.143880 հա մակերեսով արոտավայր, 17.317770 հա մակերեսով այլ հողատեսք և 0.288790 հա մակերեսով ջրային) հողեր	07-001-0500-0116 կադաստրային ծածկագրով 22.2279 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից նշված պահանջը՝ կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներն իրականացվեն բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

4. Հրազդան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Հրազդան քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝ ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, «30» «սեպտեմբերի» 2024 թ.